# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼ. ՏՕՆԱԿԱՏԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

1) Հոկտեմբերի 6-ին Թիֆլիսի բոլոր հայ եկեղեցիներում պատարագից յետոյ կը լինեն քարոզներ ազգային մեծ տօնի մասին։

2) Հոկտեմբերի 11-ին քաղաքի բոլոր հայ դպրոցներում դասաւանդութիւնը աւարտվում է 3-րդ դասից յետոյ. ապա ուսուցիչները բացատրում են աշակերտութեան մեծ տօնի նշանակութիւնը։

3) Հոկտեմբերի 12-ին ս. Թարգմանչաց տօնին Վանքի աւագ եկեղեցում մատուցվում է պատարագ քաղաքի ամբողջ հոգևոր դասի ներկայութեամբ։ Պատարագիչն է Աշոտ եպիսկոպոսը։ Պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանգիստ հայ գրերի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։ Եկեղեցում ներկայ են լինելու քաղաքի բոլոր հայ և պետական դպրոցների աշակերտութիւնը և հայ ուսուցչական դասը։ Հրաւիրվում են ներկայ լինել հայ ազգային և կուլտուրական հաստատութիւնները, հայ վաճառականութիւնը, արհեստաւոր դասը իր դրօշակներով և ամբողջ հայ ժողովուրդը։

4) Հայոց Դրամատիքական Ընկերութեան նախաձեռնութեամբ Արտիստական թատրոնում տեղի կունենայ ձրի ներկայացում հայ աշակերտութեան համար։

5) Երեկոյեան ժամը 8-ին Թիֆլիսի ժողովարանում տեղի կունենան տօնին նուիրված դասախօսութիւններ։

6) Հոկտեմբերի 13-ին, Վանքի աւագ-եկեղեցում մատուցվում է պատարագ ամբողջ հոգևոր դասի և վերոյիշեալ բոլոր հաստատութիւնների և ժողովրդի ներկայութեամբ։ Պատարագիչն է Թեմակալ առաջնորդը։ Պատարագից յետոյ կը կատարվի հայրապետական մաղթանք։

Ապա հանդէսը Վանքի աւագ-եկեղեցուց եկեղեցական թափորով կուղևորվի դէպի Ներսիսեան դպրոցի նոր շէնքը։

Դպրոցի դահլիճում հանդէսը բաց կանի Թեմի առաջնորդը մի բանախօսութեամբ։

Հանդէսին հրաւիրված են լինելու պետական բարձրաստիճան պաշտօնեաներ և քաղաքի բոլոր կուլտուրական հաստատութիւններից ներկայացուցիչներ։

Հրաւիրված օտարազգի հիւրերի համար կը լինի բանախօսութիւն ռուսերէն լեզուով։

Հանդէսին կընդունվեն շնորհաւորութիւններ տօնի առիթով։

Դպրոցի հոգաբարձութիւնը ներկաներին կը հիւրասիրէ թէյով։

7) Նոյն օրը երեկոյեան Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի կունենայ բանկէտ։

8) Հոկտեմբերի 14-ին Արտիստական թատրոնում եր. ժամը 8-ին լինելու է տօնին նուիրված ներկայացում կենդանի պատկերներով։

---

## ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Ինչպէս գիտենք արտասահմանի հայութիւնը (Թիւրքիա, Եգիպտոս, Եւրոպա, Ամերիկա, Պարսկաստան) որոշել է նոյնպէս այս տարի հոկտ. 12—13-ին տօնել Համազգային Յօբելեանը թէ կատարելով տեղական տօնախմբութիւններ, կազմակերպութեամբ հանդիսաւոր նիստերի, երեկոյթների, դասախօսութիւնների և թէ մասնակցելով կենտրոնական յօբելեանական տօնախմբութեան՝ ներկայացուցչութեան կամ պատգամաւորութեան միջոցով։

—

Հայկական հարցի առիթով կազմված ազգային պատգամաւորութիւնը հրաւէր ստացած լինելով Ամենայն Հայոց Կաթողիկոսից՝ մասնակցելու Համազգային Յօբելեանին Էջմիածնում կատարվելիք տօնախմբութիւններին հոկտ. 12—13-ին, պատգամաւորութեան նախագահ Պօղոս փաշա Նուպար լիազօրել է Հ. Առաքելեանին լինել ազգային պատգամաւորութեան ներկայացուցիչը Էջմիածնում և մատուցանել շնորհաւորութիւններ Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

—

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (Եգիպտոսում), որի նախագահն է Պօղոս փաշա Նուպար, կարգել է Հ. Առաքելեանին ներկայացուցիչ Համազգային Յօբելեանին։

—

Թիւրքիայի Հայոց Միացեալ Ընկերութիւնը հեռագրով խնդրում է Հ. Առաքելեանին լինել Ընկերութեան ներկայացուցիչը Էջմիածնում և Թիֆլիսում Համազգային Յօբելեանին և շնորհաւորել յանուն Միացեալի 84 դպրոցների, 6500 աշակերտների և 240 ուսուցիչների ազգային մեծ տօնը։